

**ISSN 0321-0340**

**ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎՈՆԵՐԻ**

**N 2 (112)  
2008**

ԻՐԱՆԻԲԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎՈՎԵՐԻ

*Չիտհանրամատչելի հանգես*

Вестник архивов  
Армении

*Научно-популярный журнал*

Bulletin of Armenian  
Archives

*Scientific practical journal*

2 (112)  
2008

---

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բադալյան (պատասխանատու քարտուղար)  
Ալբերտ Կիրինյան, Ավագ Հարությունյան, Էմմա  
Հովսեփյան, Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան,  
Արամ Սիմոնյան

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2008թ.

## ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Մեծ է եղել Ռուբեն Տեր-Մինասյանի ունեցած դերկատարությունը 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարում ու Հայաստանի առաջին Հանրապետության կերտման և կայացման ճանապարհին: Հատկապես անգնահատելի է նրա ավանդը Հայաստանի առաջին հանրապետության շրջանում, թուրք-թաթարական անջատողական դրսևորումները զսպելու և հայ գաղթականությանը վերաբնակեցնելու գործում: Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո Ռ.Տեր-Մինասյանն անցնում է արտասահման և, որպես ՀՀԴ ղեկավար գործիչ, նվիրվում Հայ Դատի արծարծմանն ու սփյուռքի հայապահպանությանը:

1933թ. ՀՀԴ 12-րդ Ընդհանուր ժողովին՝ գրած նամակում իր գործն ավարտած համարելով, Ռ.Տեր-Մինասյանը, հրաժարվելով ակտիվ կուսակցական ղեկավար գործունեությունից<sup>1</sup>, զբաղվում է իր հուշերը գրելով: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, զգալով հայ ժողովրդի գլխին կախված վտանգը, ինչպես նաև՝ Հայկական հարցը լուծելու բարեպատեհ առիթը, նա կրկին լծվում է ակտիվ քաղաքական աշխատանքների:

ՀՀԴ Բյուրոյի 1942թ հուլիսի 2-ի որոշմամբ Ռ.Տեր-Մինասյանը լիազորվում է հակահիտլերյան կռալիցիայի երկրների մոտ Հայկական հարցի քարոզչության քաղաքականություն վարել: Նա լիազորված էր խոսելու Դաշնակցության անունից<sup>2</sup>:

Ռ.Տեր-Մինասյանը պատերազմի տարիներին Հայկական հարցի լուծման վերաբերյալ հուշագիր է նախապատրաստում, որն ուղղվելու էր ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին:

Հայկական հարցի վերաբերյալ հուշագիրը 1943թ. ամռանն արդեն պատրաստ էր<sup>3</sup> (ցավոք, մեր ձեռքի տակ միայն հուշագրի սևագիր տարբերակն է): Այն բաղկացած էր 23 էջից և իր մեջ ներառում էր հետևյալ բաժինները՝ Հայկական հարցի անցյալը, հայերը ներկա պատերազմի ընթացքում, հայերը Եվրոպայում և Ամերիկայում, հայերը Մերձավոր Արևելքում, հայկական պահանջները<sup>4</sup>:

Առաջին բաժնում հեղինակը ներկայացնում է Հայկական հարցի պատմությունը, մեծ տերությունների դիրքորոշումները, 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի, 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: Հուշագրի երկրորդ, երրորդ և չորրորդ բաժիններում Ռ.Տեր-Մինասյանը ներկայացնում է հայ ժողովրդի և հատկապես Խորհրդային Հայաստանի մարդկային նյութական և բարոյական լուրջ ներդրումը ֆաշիզմի դեմ պատերազմում: «Հայկական պահանջները» բաժնում հեղինակը նշում է, որ Խորհրդային Հայաստանի տարածքը շատ քիչ է հայ ժողովրդի աճը բավարարելու համար, մինչդեռ Արևմտյան Հայաստանի հողերն անմշակ են, բնակչությունն էլ՝ շատ նոսր: Ռ.Տեր-Մինասյանը հուշագիրն ավարտում է հետևյալ համոզումով. «Մերձավոր Արևելքի հին եւ յառաջադեմ այս ժողովուրդին տառապանքը պետք է գտնե ու ան տիրանայ իր պապենական հողերուն եւ ունենայ ազատութիւն հոն կեդրոնանալու: Հայերը պատրաստ են խաղաղութեամբ ապրելու իրենց բոլոր դրացիներուն հետ ու գրաւելու իրենց պատուաւոր տեղը քաղաքական ու տնտեսական այն կարգուսարքին մէջ, որ կը ծրագրուի յետպատերազմեան աշխարհի վերակառուցման նպատակով»<sup>5</sup>:

1943թ. դեկտեմբերի 3-ին Ռուբենը Դաշնակցության անունից վերոնշյալ հուշագիրն ուղարկում է երեք տերությունների ղեկավարներին՝ Մեծ Բրիտանիայի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 101, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 144, թ. 10:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 374, թ. 1-7:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 1-7:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 7:

վարչապետ Ուինստոն Չերչիլին<sup>1</sup>, ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին<sup>2</sup> և ԽՍՀՄ ղեկավար Իոսիֆ Ստալինին<sup>3</sup>:

Նշենք, որ ՀՀԴ Բյուրոն մասամբ համաձայն չի եղել հուշագրի բովանդակությանը: Ի դեպ, հուշագիրը պատրաստելիս Ռ.Տեր-Մինասյանը նամակների միջոցով այն քննարկել է նաև իր եղբոր՝ Երվանդի<sup>4</sup> հետ<sup>5</sup>: Այս քննարկումներում հարցի լուծման հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում: Օրինակ՝ Հայաստանի մասին խոսելիս նա հիմք է ընդունում Վիլսոնի գծած սահմանները, սակայն հաշվի առնելով «ոչ հայախոս եւ ոչ հայադավան (ոչ քրիստոնյա - Խ.Ս.) հայերի հանգամանքը» Հակյարիի եւ Սեւ ծովի շրջանների մասը թողել է առաձգական»<sup>6</sup>: Խոսելով Հայաստանի կարգավիճակի մասին, Ռ.Տեր-Մինասյանը հակված էր այն կարծիքին, որ Միացյալ Հայաստանը այլևս պետք է լինի ԽՍՀՄ-ի կազմում: (Ի դեպ ՀՀԴ Բյուրոն այս հարցում տարակարծիք էր): Հուշագրի հեղինակը նույնիսկ չէր բացառում ԽՍՀՄ-ի կազմում հայ-վրաց-քրդական դաշնությունը: Սակայն Երվանդը դեմ էր Ռուբենի այս մոտեցումներին: Նա գտնում էր, որ Միացյալ Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմի մեջ լինելուն առաջինը դեմ կլինի Անգլիան, իսկ ինչ վերաբերվում է հայ-վրաց-քրդական դաշնությանը, ապա նա առարկում էր այն առումով, որ չպետք է այլ երկրների կամ ժողովուրդների հարցերը կապել մեր խնդիրների հետ, հատկապես, որ վերջիններս կարծիքը պարզ չէ<sup>7</sup>:

Ռուբեն Տեր-Մինասյանը հետաքրքիր մոտեցում էր առաջարկում ԽՍՀՄ-ի հետ ընդհանուր լեզու գտնելու հարցում: Նա Արևմտյան Հայաստանը թուրքերից ազատագրելուց հետո ոչ միայն կողմ էր այդ տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելուն (ԽՍՀՄ կազմում), այլև, հանուն ԽՍՀՄ-ի շնորհիվ այդ ազատագրման, առաջարկում էր հրաժարվել այդ պետության դեմ թշնամությունից՝ չնայած Խորհրդային իշխանությունների կողմից վարվող հակադաշնակցական քաղաքականությանը<sup>8</sup>: Այս թեմայով Ռ.Տեր-Մինասյանը նույնիսկ առաջարկում էր հանդիպել Ստալինի հետ: Ի դեպ, այս խնդիրը նա արժարծում է նաև 1945թ. հունիսին Հովհաննես Բաղրամյանին գրած նամակում<sup>9</sup>: Եգիպտոսում ԽՍՀՄ դեսպան Նիկոլայ Նովիկովին 1944թ. մարտի 3-ին գրած նամակում Ռուբեն Տեր-Մինասյանը ԽՍՀՄ-ին համարելով հայ ժողովրդի պաշտպան եւ Հայկական հարցի վերջնական լուծման ջատագով, հերթական անգամ առաջարկում է դաշնակցության աջակցությունը: Ցավոք Խորհրդային իշխանության ներկայացուցիչները ՀՀԴ աջակցության առաջարկներին չեն արձագանքել:

Հարկ է նշել, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին սփյուռքահայության հողային պահանջները միայն Ռուբենի պատրաստած և դաշնակից մեծ երկրների ղեկավարներին ուղարկած հուշագրով չվերջացան: Տարագիր հայությանը Արևմտյան Հայաստանում վերաբնակեցնելու և այն Խորհրդային Հայաստանին միացնելու խնդրանքով Ստալինին, Չերչիլին և Ռուզվելտին 1945թ. մայիսին նամակ է գրում նաև Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանը<sup>10</sup>: Առավել ծանրակշիռ էին Սան-Ֆրանցիսկոյում տեղի ունեցող Միացյալ ազգերի կոնֆերանսին Ամերիկայի հայոց ազգային Խորհրդի և Ամերիկայի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 120, թ. 5:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 6:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 7:

<sup>4</sup> Երվանդ Տեր-Մինասյանը, որը շատ էր կապված Ռուբենի հետ, հին դաշնակցական էր: Եղել է Կարսի Կենտրոնական Կոմիտեի անդամ: Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին ֆինանսների նախարարության ներկայացուցիչն էր Բաթումում: Հայաստանի Խորհրդայնացումից հետո անցնում է Բեռլին և մինչև իր մահը (1943թ.) զբաղվում է առևտրով՝ մասնակցելով տեղի հայ գաղութի ազգային կյանքին (տես՝ ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 308, թ. 5):

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 104, թ. 1-6:

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում, թ. 6:

<sup>9</sup> Նույն տեղում, գ. 118, թ. 2:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 25, գ. 137, թ. 177-179:

հայ ազգային կոմիտեի ուղարկած զույգ հուշագրերը<sup>1</sup>: Ամերիկայի հայ ազգային կոմիտեի հուշագիրը, որը պատրաստվել էր ՀՀԴԿԿՆԱԿԳՈՒՅԱՆ կողմից, իր մեջ բավականին մեծ մասով ներառում էր Ռուբենի կողմից 1943թ. Ստալինին, Չերչիլին և Ռուզվելտին ուղղված վերևում նշված հուշագրի դրույթները:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ռ.Տեր-Մինասյանի գործունեության կարևոր մասն է կազմում նաև Հայկական հարցի լուծման շուրջ սփյուռքահայ կուսակցություններին համախմբելը: Նրա անմիջական մասնակցությամբ Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Ռամկավար Ազատական և Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունները կազմում են համագործակցության մի նախագիծ<sup>2</sup>: Նախագծի համաձայն սփյուռքահայ կուսակցությունները, Հայ Դատի իսկական իրավատեր համարելով Խորհրդային Հայաստանի կառավարությանը, իրենց պատրաստակամությունն են հայտնում աջակցել նրան: Կուսակցությունները պարտավորվում են նաև համատեղ ուժերով աջակցել դաշնակիցներին, ձեռնամուխ լինել ներգաղթի կազմակերպմանը և ազատագրված հայկական հողերի վերաբնակեցմանը<sup>3</sup>:

Ընդհանրապես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ամբողջ սփյուռքահայությունն էր որգևորվել: Պոտսդամի կոնֆերանսի օրերին (1945թ. հուլիսի 19-ին) Ամերիկայի Հայկական Ազգային Խորհուրդը հեռագիր է ուղարկում մեծ տերությունների ղեկավարներին՝ հայկական հարցը կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով<sup>4</sup>: Սակայն, ինչպես նշվում է ՀՀԴ Ամերիկայի 1946թ. շրջանային ժողովի շրջաբերականում, որի մի օրինակն ուղարկվել էր նաև Ռուբենին, «Դաշնակիցները կրճատ պառակտուած ըլլալ իրենք իրենց միջև, բայց ոչ մեր առջև»<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանի տարածքը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարց էին բարձրացրել նաև նույն Խորհրդային Հայաստանի ղեկավարները<sup>6</sup>:

Ընդհանրապես Ռուբեն Տեր-Մինասյանը Արևմտյան Հայաստանի տարածքների վերադարձման հարցում չափավոր մոտեցումներ է ունեցել: Նա այդ տեսակետին է եղել ոչ միայն Երկրորդ աշխարհամարտի, այլև առաջին համաշխարհային տարիներին: Իր ընկերների հետ նամակներից մեկում Ռուբենն այն կարծիքն է հայտնում, որ թուրքերը պատրաստ են Կարսի շրջանը զիջել Խորհրդային Հայաստանին, պայմանով, որ հայերը մնացյալ տարածքներից հրաժարվեն և իրենք համապատասխան երաշխիքներ ունենան: Ըստ նամակագրի այդպիսի երաշխիքներ կարող էին տալ անգլիացիները<sup>7</sup>: Նամակը գրվել է 1946թ. փետրվարի 1-ին՝ Եգիպտոսից ստացված տեղեկությունների հիման վրա:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ռուբենը ՀՀԴ Բյուրոյի հետ քննարկել է նաև գերմանացիների կողմից Կովկասը գրավելու դեպքում՝ հայությանը տարահանելու հարցը: Ռուբենի առաջարկած տարբերակներից Բյուրոն ծրագրում է անհրաժեշտության դեպքում՝ աշխատել դեպի Պարսկաստան տարահանման ուղղությամբ<sup>8</sup>: Սակայն բարեբախտաբար մնան անհարաժեշտություն չի առաջանում:

Այսպիսով, տարագրության մեջ գտնվող Հայաստանի առաջին հանրապետության ակնամվոր գործիչ, ՀՀԴ բյուրոյի երկարամյա ներկայացուցիչ Ռուբեն Տեր-Մինասյանը, որ հեռացել էր ակտիվ քաղաքականությունից եւ զբաղվում էր հուշագրությամբ, Երկրորդ աշխարհամարտը սկսվելուց հետո կրկին զինվորագր-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 25, գ. 137, թ. 45-64:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 309, թ. 8-11:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 11:

<sup>4</sup> Կարապետյան Մ., Գևորգյան Է., «Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին», Երեւան, 2007, էջ 325:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 189, թ. 53:

<sup>6</sup> Վիրաբյան Ա., «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով», Երեւան, 2001, էջ 37:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 189, թ. 20:

<sup>8</sup> Նույն տեղում, գ. 144, թ. 12:

վում է Հայ Դատին: ՀՀԴ Բյուրոյի լիազորությամբ նա ակտիվ աշխատանքներ է տանում հատկապես հակահիտլերյան կոալիցիայի երկրների ղեկավարների ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու կապակցությամբ: Ցավոք նրա կատարած աշխատանքները անտեսվեցին դաշնակիցների կողմից եւ Արևմտահայաստանի վերադարձման խնդիրը մնաժ չլուծված:

**Խաչատուր Ստեփանյան**  
պատմական գիտությունների  
թեկնածու

## **ДЕЯТЕЛЬНОСТЬ РУБЕНА ТЕР-МИНАСЯНА ВО ВРЕМЯ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ**

### **РЕЗЮМЕ**

Во время второй мировой войны АРФ Дашнакцутюн уполномочил Рубену Тер-Минасяну со странами антигитлеровской коалиции вести политику пропоганды Армянского вопроса. Рубен Тер-Минасян подготовил и представил главам СССР, США и Великобритании меморандум решения Армянского вопроса. Кроме того Рубен руководству Дашнакцутюн предлагал за освобождению Западной Армении отказаться от вражды с СССР. Он полагал, что освобожденная Западная Армения должна составлять часть Советской Армении. К сожалению предложения Рубена Тер-Минасяна были игнорированы союзниками и вопрос возвращении Западной Армении остался нерешенным.

**Хачатур Степанян**  
кандидат исторических  
наук

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

<b>Մաղալյան Արտակ</b>	- Վավերագրեր Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի գործունեության մասին .....	3
<b>Ստեփանյան Գևորգ</b>	- Փաստաթուղթ Բաքու քաղաքի XIX դ. 30-ական թթ. վերջերի հայ բնակչության մասին .....	8
<b>Կիրիմյան Ալբերտ</b>	- Հայոց ազգային բյուրոյի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին .....	13
<b>Սահակյան Ռուբեն</b>	- Փաստաթղթեր Վասպուրականի վերաշինության վերաբերյալ (1915-1916թթ.) .....	23
<b>Ալեքսանյան Կարինե</b>	- Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին .....	40
<b>Ավետիսյան Մարո</b>	- Փաստաթղթեր Կարսի մարզի սոցիալ-քաղաքական իրավիճակի վերաբերյալ (1919-1920թթ.) .....	57
<b>Մախնուրյան Գայանե</b>	- Փաստաթղթեր Խարբերդի նահանգի մասին (1919-1922թթ.) .....	75
<b>Ավետիսյան Սուրեն</b>	- Փաստաթղթեր Խորհրդային Հայաստանի իշխանությունների ու Ամերկոմի համագործակցության մասին .....	87
<b>Մակարյան Լիլիթ</b>	- Փաստաթղթեր Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության վերաբերյալ .....	99
<b>Ղազախեցյան Վլադիմիր Բաղալյան Արմեն</b>	- Սփյուռքում Խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ .....	109
<b>Մանգասարյան Վարդիթեր Հովսեփյան Էմմա</b>	- ՍԴՀԿ-ի և ՌԱԿ-ի գործունեությունը սփյուռքի մի քանի համայնքներում 1945-1985թթ. ....	125
<b>Մանգասարյան Վարդիթեր Հովսեփյան Էմմա</b>	- Հայ զրոհների նամակները գրականագետ Արշալույս Արշարունուն .....	151
<b>Պետրոսյան Քնարիկ</b>	- Փաստաթղթեր Հայաստան-Նորվեգիա փոխհարաբերություններից (1990-1999թթ) .	173
	- Հայաստանյազ ավետարանական եկեղեցին և Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության գործունեությունը Հայաստանում 1990-ական թթ. ....	186

## ՀՈՂՎԱԾՆԵՐ

<b>Օհանջանյան Արտեմ</b>	- Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մեղսակցությունը հայոց ցեղասպանությանը .....	200
<b>Ավագյան Գոհար</b>	- Միքայել Պապաջանյանի գործունեությունը Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕՉԱԿՈՄԻ) կազմում .....	213
<b>Ղուլյան Յուրիկ</b>	- Մի քանի հարցեր հայ-ադրբեջանական հարաբերություններից (քոչի խնդիրը 1919թ.) ..	225
<b>Սուքիասյան Համո</b>	- ՀՍԽՀ արտգործոժողկոմատի «Բյուլետենը» հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում (1921-1922թթ.) .....	235



<b>Բալասանյան Գրիգոր</b>	- Խորհրդային Հայաստանի առևտրատնտեսական առնչությունները Եվրոպական երկրների հետ 1921-1922թթ. ....	244
<b>Ստեփանյան Խաչատուր Եթիմյան Գագիկ</b>	- Ռուբեն Տեր-Մինասյանի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին .....	251
	- Մշակույթի բնագավառում ԽՍՀՄ պետական քաղաքականության ուսումնասիրման գիտական հիմունքները (1945-1990թթ.) .....	255

### ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Հարությունյան Երվանդ Օվանեսով Բորիս</b>	- Հին Եգիպտոսի արխիվները .....	261
	- Ստավրապոլ քաղաքի հայերի ազգային տարրական կրթությունը (XIX դարի վերջ XX դարի սկիզբ) .....	265
<b>Ֆարմանյան Լևոն</b>	- Հայ բնակչության միջհանրապետական միգրացիան 1950-70-ական թվականներին .	272

### ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

- Հաշվետվություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2007թ. գործունեության .....	276
---	-----

### ԼՐԱՏՈՒ

- Ցուցահանդեսներ, արխիվային ուղորտի կարևոր իրադարձություններ, միջազգային կապեր, հրապարակումներ, մեր հոբելյարները	281
--	-----